մը վերջ ազատ արձակվելեն հետո, Գումգաբուի արվարձանին Լանկա թաղի ս. Նիկողայոս եկեղեցիին մեջ հիմնեց արևմտահայերու առաջին տպարանը։ Ասիկա 1483-ին հրեա Բաֆֆի Կերսոնի կողմե Կ. Պոլսո մեջ հիմնված առաջին տպարանեն վեր երկրորդը կը հանդիսանար։ Աբգար Թոխաթցին 1567—1569 թվականներուն այդտեղ 6 գիրք տպագրեց։ Ասոնք Թուրքիո մեջ տպված առաջին հայերեն գիրքերն էին։ Աբգար Դպիրեն վերջ Կ. Պոլսի երկրորդ հայկական տպարանը հիմնեց անվանի մտածող և պատմագիր Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը՝ Գումգաբուի Գատըրկա թաղը։ Սակայն այս տպարանի կյանքը կարճատև եղավ (1677—1678)։ Երկու գիրքեր տպագրելե վերջ փակվեցավ։ Տարակարծության հետևանքով իր գործակիցեն՝ Գրիգոր Մարզվանցիեն, բաժնըվող Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին 1699-ին տպարան մը հիմնեց։ Աստվածատուրի մահեն վերջ (1748) անոր որդիները՝ Հովհաննեսը, Մինասը և Հարությունը տպագրական և հրատարակչական գործը շարունակեցին 26 տարի (1750—1776)։ Այդ թվականեն վերջ տպարանը անցավ Ապուչեխցի Հովհաննես Արապյանին։

Նույն տարին Մարզվանցի Գրիգորը Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի տառերու օրինակով նոր տառեր ձուլեց և հիմնեց չորրորդ տպարան մը, որ իր գոյության 45 տարիներու ընթացքին տպագրեց 14 անուն գիրք (1698—1734 թթ.)։ Սարգիս դպիրն ու անոր որդին՝ Մարտիրոս Սարգիսյանն ու թոռները իրենց տպարանին մեջ տպեցին 38 գիրք։ Այդ միջոցին, 1730-են սկսյալ, Կ. Պոլսո մեջ բացվեցան գրախանութներ։ Անոնցմե առաջինն էր Աստվածատուր դպիրի գիրքերը վաճառող Էրզրումցի Մանուկի գրախանութը։

Անկե հետո, կարգով, Սեբաստացի ոսկեզօծող Բարսեղ և Հակոբ եղբայրներու 1735 թվականին հիմնած տպարանը 5 տարի վերջ՝ իր տերերու մահվան հետևանքով, անցավ Բարսեղի որդիներուն՝ Գաբրիելին, Սարգիսին, Աստվածատուրին և Միքայելին։ Այս տպարանին մեջ 1736—1755 թվականներուն տպագրվեցան 6 գիրք։ Այս ժամանակաշրջանին է, որ երևան կուգան վիմատիպ նկարները՝ տպագրված գիրքերուն մեջ։ Իսկ 1734—1746 թվականներուն Աբրահամ Թրակացին կը տպագրե տասե ավելի գիրքեր։

1766-ին Հովհաննեսի և Հակոբի կողմե հիմնված տպարանին մեջ առաջին անգամ կը հանդիպինք տառաձուլիչ Պողոսին (Հովհաննեսի որդին է, այսուհետև կհիշենք Արապյան կամ Արապօղլի անունով)։ Այստեղ մինչև 1769 թվականը տպագրվեցան 7 գիրք։ Ստեփանոս Պերպեր-